Արձանագրություն N 4

<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/15>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար մանկական արվեստի դպրոցի շենքի կառուցման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության անցկացման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Ծաղկաձոր 30 մայիս 2019թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի
Նախագահ՝ Գ.Հայրապետյան
անդամներ՝ Վ.Հայրապետյան
Ն.Սիմոնյան
Ա.Մեսրոպյան
Ն.Խաչատրյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. Միաժամանակյա բանակցություններ վարելու մասին

(Գ.Հայրապետյան)

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման >> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ <<Խոյանք>> ՍՊԸ-ին, <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ին և ԱՁ Լարիսա Նալբանդյանին, էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցվել էր՝ հրավիրելով վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ, քանի որ բոլոր մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են տվյալ աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունել ի գիտություն, որ՝

Սահմանված ժամկետում բանակցությունների ներկայացել է միայն <<Խոյանք>> ՍՊԸ-ն և տարված բանակցությունների արդյունքում իր կողմից առաջարկված գինը նվազեցվեց և մասնակցի կողմից առաջարկվեց 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Գ.Հայրապետյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման >> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա) կետը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ **<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/15>>**

ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել <<Խոյանք>> ՍՊԸ-ն՝ որպես ամենացածր գնային առաջարկ ներկայացրած, բավարար գնահատված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին**

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ *30.05.2019թ.* հարցում կատարել ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. **Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին**

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված հարցման պատասխանի ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ----------Գ.Հայրապետյան

անդամներ՝ ----------Ն.Սիմոնյան

----------Ա.Մեսրոպյան

----------Ն.Խաչատրյան

----------Վ.Հայրապետյան

քարտուղար՝----------Ա.Ավետիսյան